

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N N ը/ Կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	2018թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը	2018թ. աշխատանքների և միջոցառումների կատարման ընթացքը
1 Կառավարման համակարգի կատարելագործում							
1.1	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի բարելավում	1) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում	ՀՀ բնապահ պանության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակա	2018թ. և շարունակական	«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվող «Զրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի	ԲՆ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի պետական ծրագրի շրջանակներում իրականացրել է Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգ: Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգ հունիս ամսին: Լճի ջրի որակի

				<p>դեմիա (համաձայնությամբ)</p>	<p>մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում:</p>	<p>ուսումնասիրության համար վերցվել են փորձանմուշներ ինչպես լճի մակերեսից, այնպես էլ խորքային շերտերից՝ 2, 5, 10, 20, 30մ խորություններից, որոնցից յուրաքանչյուրում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ: Ընդհանուր առմամբ որոշվել է ջրի քիմիական որակի 2000 ցուցանիշ:</p> <p>Սևանա լիճ թափվող գետերի հիդրոքիմիական մոնիթորինգ՝</p> <p>Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 10 գետի (Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվակ, Գավառագետ) և Արփա-Սևան թունելի 19 մոնիթորինգային դիտակետից 2018թ.-ին վերցվել է ջրի 119 փորձանմուշ: Ընդհանուր առմամբ որոշվել է 4575 ջրի որակի ցուցանիշ:</p> <p>Սևանի ջրավազանային կառավարման տարածքի որակի մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վերլուծվել և ամփոփվել են «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամյա տեղեկագրերում, եռամսյակային տեղեկագրերում, հանձնվել</p>
--	--	--	--	--------------------------------	---	---

						<p>համապատասխան կազմակերպություններին և հրապարակվել ՊՈԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում (www.armmonitoring.am), իսկ 2018թ. մայիսի Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի ծավալուն արդյունքները գտնվում են բնապահպանության նախարարությունում:</p> <p><u>ԳԱԱ ԿՀԷԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ</u></p> <p>2018թ. իրականացվել են Սևանա լիճ թափվող հիմնական գետերի՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս, Կարճաղբյուր և Մասրիկ, ձկնաբանական ուսումնասիրություններ:</p> <p><u>Արդյունքում.</u></p> <p>Ձկնագետ՝ գետի զոոբենթոսի համակեցության տեսակային բազմազանության և ջրի որակի բարձր արժեքները վկայում են էկոհամակարգի համեմատաբար լավ վիճակի մասին:</p> <p>Գավառագետ՝ ջրի որակը միջին հոսանքում համապատասխանել է «ոչ բարձր որակ» դասին, իսկ ստորին հոսանքում՝ «ցածր որակ» դասին:</p> <p>Գավառագետի հիդրոէկոհամակարգը ակունքից մինչև գետաբերան գտնվում է</p>
--	--	--	--	--	--	---

						<p>մարդածին տարբեր գործոնների բացասական ազդեցության ներքո:</p> <p>Մասրիկ՝ գետի միջին հոսանքում ակնհայտորեն զգացվում է Սոթք և Մեծ Մասրիկ գյուղերի հոսքաջրերի, ինչպես նաև ոռոգման և ՀԷԿ-ի համար կատարվող ջրառի ազդեցությունը: Գետի ուսումնասիրված երկու դիտակետերում գրանցվել են կենսաբազմազանության ինդեքսի ցածր արժեքներ: Նշված արժեքները խոսում են Մասրիկ գետի վրա ջրառի պատճառով հաճախ գրանցվող սակավաջրության, հանքաարդյունաբերության ազդեցության, կենցաղային աղբի և հոսաքաջրերի, գյուղատնտեսական հոսաքաջրերի ազդեցության մասին և այլն: Էնդեմիկ ձկնատեսակների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, անհրաժեշտ է նվազեցնել նշված գործոնների ազդեցությունը գետի էկոհամակարգի վրա:</p> <p>Արգիճի՝ գետի էկոհամակարգը համեմատաբար լավ վիճակում է: Էնդեմիկ ձկնատեսակների համար խոչընդոտ է հանդիսանում գետի վրա կառուցված ՀԷԿ-ը:</p> <p>Կարճաղբյուր՝ գետի էկոհամակարգը վերին հոսանքում գտնվում է</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համեմատաբար հավասարակշռված վիճակում, բացառությամբ, երբ գյուղացիներն իրականացնում են ջրառ: Ջրի որակը համապատասխանել է «բարձր որակ» դասին: Հոսանքն ի վար գետն աղտոտվում է բնակավայրերի կողմից: Թեպետ գետի ստորին հատվածում ջուրը թափանցիկ է, սակայն այստեղ գրանցվել է «ոչ բարձր» ջրի որակ, ինչը գետ թափվող համանուն գյուղի աղբի և հոսքաջրերի ազդեցության հետևանք է:</p> <p>Լիճք՝ գետը իրենից ներկայացնում է աղբյուր, որի ակունքում ջրի ջերմաստիճանը ողջ տարի շատ ցածր է: Այդ իսկ պատճառով հատակային կենդանիներից շատերը այստեղ չեն հանդիպում և կենսաբազմազանության ինդեքսի արժեքները շատ փոքր են: Վեգետացիոն շրջանում FBI ինդեքսի արժեքները վերին և միջին հոսանքներում համապատասխանել են «շատ լավ» դասին: Չնայած որ կենսաբազմազանության ինդեքսը այս հատվածում ավելի բարձ է, ջրի որակը գնահատվել է որպես «միջին որակ», ինչը այս հատվածում հոսքի գրեթե բացակայության հետևանք է: Ստացված տվյալների հիման վրա կարելի է</p>
--	--	--	--	--	--	--

						<p>եզրակացնել, որ գետի էկոհամակարգը կայուն վիճակում է:</p> <p>Վարդենիկ՝ հետազոտությունը ցույց է տալիս, որ անցյալ տարվա համեմատ գետը ենթարկվել է որոշակի օրգանական աղտոտվածության: Աղտոտման մասին է վկայում նաև գետի քարերի մամռակավման աստիճանը: Վերին հոսանքի գարուն-աշուն ժամանակահատվածում ջրի որակը միջինում համապատասխանել է «լավ որակ» դասին: Դիտակետից ստորև գտնվող ՓՀԷԿ-ի ջրառի հետևանքով գետը մասնատված է:</p> <p style="text-align: center;"><u>Եզրակացություններ</u></p> <ul style="list-style-type: none"> • Ձկների միգրացիան դեպի ձվադրավայրեր հնարավոր է Կարճաղբյուր, Ձկնագետ և Լիճք գետերում: Մասրիկ գետի ավազանում ձկների ձվադրավայրեր կարող է հանդիսանալ Ակունք վտակի վերին հոսանքը: • Ձկնագետ, Արգիճի և Կարճաղբյուր գետերի վերին, իսկ Ձկնագետի նաև ստորին հոսանքներում գրանցվել է զոոբենթոսի Շենոն-Վայների կենսաբազմազանության ինդեքսի ամենամեծ արժեքները, ինչը վկայում է հարաբերական հավասարակշռության
--	--	--	--	--	--	---

						<p>մասին: Վարդենիկ գետի վերին հոսանքում գրանցվել են օրգանական աղտոտման հետևանքներ:</p> <ul style="list-style-type: none"> • Գավառագետի վերին հոսանքը տարիներ շարունակ ենթարկվում է անկառավարելի ջրառի: Այդ պատճառով գետի հունը տարվա մեծ մասը գրեթե չոր է: Դա լուրջ վնաս է հասցնում է գետի էկոհամակարգին և խոչընդոտում է ձկնատեսակների միգրացիան: • Վարդենիս, Արգիճի և Մասրիկ գետերի ՓՀԷԿ-երի ձկնանցարարները պիտանի չեն ձկների միգրացիայի համար և մասնատում են գետերը: • Գետերի աղտոտումը նվազեցնելու համար անհրաժեշտ է իրականացնել կոյուղաջրերի ոչ միայն մեխանիկական, այլև կենսաբանական մաքրում: <p>(Ծավալուն հաշվետվությունը՝ 66 թերթ, ներկայացվել է բնապահպանության նախարարություն):</p>
	2) Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2018թ. և շարունակական	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոմետ ծառայության, ՀՀ գիտությունների ազգային	<p><u>Արտակարգ իրավիճակների նախարարություն՝</u> Հայպետհիդրոմետ ծառայության կողմից իրականացվել է Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոօդերևութաբանական մոնիթորինգ՝ կատարվել են լճի ջրի մակարդակի, ջերմաստիճանի, թափանցիկության, սառցային</p>

		իրականացում			<p>ակադեմիայի կողմից 2018թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրո օդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան</p>	<p>երևույթների և գոլորշացման դիտարկումներ, գետերով, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած և ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրաքանակների հաշվառում: Ամիսը մեկ անգամ, էքսպեդիցիոն կարգով, լճի հայելու ֆիքսված կետերում ստանդարտ խորությունների վրա կատարվել են ջրի ջերմաստիճանի, ալիքի բարձրության ու ջրի թափանցելիության չափման աշխատանքներ: Սևանա լճի ավազանի 2 կայաններում (Մարտունի, Վարդենյաց) շուրջօրյա, 4 ժամը մեկ անգամ կատարվել են գոլորշիացման դիտարկումներ: Սևանա լճի 4 դիտակետերում (Սևան, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի) յուրաքանչյուր 12 ժամը մեկ կատարվել է լճի մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներ: Համապատասխան ժամանակահատվածում հնգօրյա կտրվածքով ամեն օր՝ սառցային երևույթների դիտարկումներ: Իրականացվել է տեղեկատվական ապահովում և ծառայությունների մատուցում շահագրգիռ նախ.-ներին, պետական ու տարածքային կառավարման և տեղական</p>
--	--	-------------	--	--	---	---

						<p>ինքնակառավարման մարմիններին և այլ կազմակերպություններին:</p> <p>Սևանա լճի ջրային հաշվեկշռի վերաբերյալ տրամադրվել է ամսական տեղեկատվություն, իսկ Սևանա լճի մակարդակի, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի քանակի և Սևանա լճից ջրի բաց թողումների քանակի վերաբերյալ ամենօրյա տվյալներ: Մարտի երրորդ տասնօրյակում հանրապետության ղեկավար մարմիններին և այլ կազմակերպությունների տրամադրվել է Սևանա լճի մակարդակի կանխատեսում 2018թ. հուլիսի 1-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի համար, ինչպես նաև գարնանային վարարումների ընթացքում գետային ներհոսքի կանխատեսում: Պայմանավորված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ինչպես նաև սեզոնային հիդրոօդերևութաբանական պայմանների կանխատեսմամբ վերանայվել է 2018 թվականի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակի փոփոխության կանխատեսումը և տրվել է ճշգրտում:</p> <p>Իրականացվել է տեղեկատվական ապահովում և ծառայությունների մատուցում շահագրգիռ նախ.-ներին, պետական ու տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ կազմակերպություններին:</p> <p><u>ԳԱԱ ԿՀԷԳԿ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ</u></p> <p>2018թ. իրականացվել է Սևանա լճի համալիր ջրակենսաբանական հետազոտություններ:</p> <p>Հետազոտությունները ընդգրկել են սննդային շղթայի տարբեր օղակները՝ միկրոօրգանիզմներ, ֆիտո-, զոոպլանկտոն, մակրոֆիտներ, հատակային ֆաունա և այլն:</p> <p>Սևանա լճի մանրէաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Մեծ Սևանի պելագիալի ջրերում սապրոֆիտ մանրէների քանակը փոխվել է 88-2160 ԳԱՄ/մլ սահմաններում, իսկ Փոքր Սևանում՝ 215-2200 ԳԱՄ/մլ սահմաններում: Ափամերձ տարածքներում նրանց քանակը տատանվել է 400-2100 ԳԱՄ/մլ սահմաններում: Համեմատաբար փոքր քանակ է արձանագրվել միայն ամռանը</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Արևիկ դիտակետում՝ 400 ԳԱՄ/մլ: Գարնան համեմատ ամռան ամիսներին Մեծ Սևանի պելագիալի ջրերում արձանագրվել է սապրոֆիտ մանրէների թվաքանակի աճ: Վերջինս պայմանավորված էր ջրի «ծաղկմանը» հաջորդող ջրիմուռների քայքայման գործընթացով, որի հետևանքով աճել է օրգանական նյութերի պարունակությունը: Լճի պելագիալում աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել: Ափամերձ տարածքներում աղիքային ցուպիկներ հայտնաբերվել են միայն Արևիկ և Կարմիր գյուղ դիտակետերում՝ 30-150 ԳԱՄ/լ: Ռեկրեացիոն գոտիների լողափերի, ջրերում մինչ հանգստյան սեզոնի սկսվելը կոլի-ինդեքսի արժեքները եղել են փոքր՝ 20-50 ԳԱՄ/լ: Հանգստյան սեզոնի ընթացքում Փոքր Սևանի հիմնական լողափերի ջրերում այս ցուցանիշը փոխվել է 150-500 ԳԱՄ/լ սահմաններում: Առավել բարձր արժեք է գրանցվել թերակղզու լողափում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է կոլի-ինդեքսի նվազում՝ 3-4 անգամ, ինչը հիմնականում պայմանավորված է</p>
--	--	--	--	--	--	---

						<p>հաշվետու տարում լողափերի քիչ ծանրաբեռնվածությամբ (Вербина, 1980)):</p> <p>Ըստ սապրոֆիտ մանրէների քանակի Սևանա լճի ջրերը, համաձայն Դրաչևի (Драчев, 1964) ջրի որակի գնահատման, պելագիալում դասվել են. «մաքուրից չափավոր աղտոտված» կարգի, լիթորալում «չափավոր աղտոտված» կարգի:</p> <p><i>Ֆիտոպլանկտոնային համակեցություն</i></p> <p>2018թ. հուլիս ամսին Սևանա լճում արձանագրվել է ջրիմուռների բուռն աճ՝ լիճը «ծաղկել» է <i>Anabaena</i> <i>ցեղի կապտականաչ ջրիմուռներով</i>: Գերակայել են <i>Anabaena flos-aquae</i> և <i>A. spiroides</i> տեսակները: «Ծաղկման» շրջանում գրանցվել են ֆիտոպլանկտոնի առավելագույն ցուցանիշները՝ ջրիմուռների թվաքանակը կազմել է 16 528 000 քց/լ, կենսազանգվածը՝ 66.1 գ/մ³: Նմանատիպ երևույթ գրանցվել է 1964թ.-ին: Սևանա լճում ֆիտոպլանկտոնային համակեցությունում արձանագրված խմբային փոփոխությունները և ջրի «ծաղկումը» հիմնականում ջերմաստիճանի բարձրացման, ջրի մակարդակի տատանումների և լճում կենսածին</p>
--	--	--	--	--	--	--

						<p>տարրերի՝ մասնավորապես ֆոսֆորի միացությունների, ավելացման արդյունք են:</p> <p>Սևանա լճի մոդելային դիտակետերում կատարված ֆիտապլանկտոնային համակեցության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առավելագույն տեսակային բազմազանությամբ աչքի են դիտոմային ջրիմուռները: Լճում գանցվել է ջրիմուռների 35 տեսակ, այդ թվում՝ դիտոմային ջրիմուռների՝ 17, կանաչների՝ 7, կապտականաչ և էվգլենային ջրիմուռների 5-ական և դինոֆիտային ջրիմուռների 1 տեսակ: Տեսակային բազմազանության ցուցանիշով լճի երկու հատվածները գրեթե չեն տարբերվել:</p> <p>Ինչպես և նախորդ երեք տարիների մայիս ամսին, դիտվել է ջրիմուռների թույլ քանակական զարգացում: 2018թ. մայիս ամսին ֆիտապլանկտոնային համակեցության միջին ամսական թվաքանակը Փոքր Սևանում կազմել է 173.5, իսկ Մեծ Սևանում՝ 162.5 հազ. բջ./լ: Կենսազանգվածի ցուցանիշը 1 մ³ ջրում համապատասխանաբար կազմել է 0,42 և 0.55 գ:</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Փոքր Սևանում գերակայել է կապտականաչ ջրիմուռների խումբը՝ ընդհանուր թվաքանակում և կենսազանգվածում դրանց մասնաբաժիններ կազմել են համապատասխանաբար՝ 52 և 50%: Երկրորդ տեղում ըստ թվաքանակի հանդես են եկել դիատոմային ջրիմուռները՝ 29%, ըստ կենսազանգածի՝ կանաչ ջրիմուռների խումբը՝ 27%: Հարկ է նշել, որ նախորդ տարի նույն ժամանակահատվածում գերակայողը եղել է դիատոմային ջրիմուռների խումբը: Առանձին տեսակներից գերակա դիրքում գրեթե հավասար մասնաբաժններով հանդես են եկել կապտականաչ ջրիմուռներ <i>Aphanothece clathrata</i>-ն (որը նախորդ տարի կազմել էր ընդհանուր թվաքանակի 5%-ը) և <i>Microcystis aeruginosa</i>-ն (նախորդ տարի՝ 7%): Դիատոմային ջրիմուռներից <i>Stephanodiscus</i> ցեղի ներկայացուցիչները, որոնք նախորդ տարի հանդես էին եկել դոմինանտ դիրքում, այս տարի որոշակիորեն աչքի են ընկել միայն ըստ կենսազանգվածի՝ կազմելով ընդհանուրի 5%-ը: Դիատոմայինների մեկ այլ ներկայացուցիչ՝ <i>Cyclotella kutzingiana</i>-ն, ինչպես նախորդ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>տարի մայիսին, այնպես էլ ընթացիկ տարում հանդիսացել է ենթադոմինանտ տեսակ ըստ թվաքանակի՝ 20.5%, ըստ կենսազանգվածի ենթադոմինանտ տեսակ 22% մասնաբաժնով հանդիսացել է կանաչ ջրիմուռ Sphaerocystis schroeterii-ն: Այս ջրիմուռը նշանակալի դեր էր խաղում լճի օլիգոտրոֆ փուլում, մեր հետազոտության տարիներին այն դուրս էր մղվել համակեցությունից և արձանագրվում էր էպիգոդիկ, իսկ վերջին երեք տարիներին դիտվում է այս տեսակի դերի մեծացում:</p> <p>Մեծ Սևանի N22 կայանում դոմինանտ կոմպլեքսը որոշակիորեն տարբերվել է Փոքր Սևանի պատկերից. այստեղ կապտականաչ ջրիմուռները գերակայել են միայն ըստ թվաքանակի՝ կազմելով ընդհանուրի 45%-ը, ըստ կենսազանգվածի՝ կանաչ ջրիմուռները՝ 39%: Նշենք, որ նախորդ տարի մայիսին լճի այս հատվածում գերակա դիրքում հանդես էին եկել դիատոմային ջրիմուռները, որոնց մասնաբաժինն այս տարի կազմել է ընդհանուր քանակական արժեքների 20 և 14%-ը: Առանձին տեսակներից առավելագույն նշանակություն ունեցել է Microcystis aeruginosa-ն ըստ թվաքանակի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>(35%) և կանաչ ջրիմուռ <i>Oocystis solitaria</i>-ն ըստ կենսազանգվածի (25.4%): <i>Microcystis aeruginosa</i>-ն միաժամանակ հանդիսացել է սուրբոմինանտ ըստ կենսազանգվածի ցուցանիշի (23%), ըստ թվաքանակի երկրորդ տեղում 13% մասնաբաժնով հանդես է եկել դիատոմային <i>Cyclotella kuetzingiana</i>-ն: Հարկ է նշել, որ Մեծ Սևանում ավելի մեծ դեր են ունեցել նաև էվգլենային ջրիմուռները, որոնցից վերջին տարիներին հաճախ հանդիպող <i>Trachelomonas hispida</i>-ն ընդհանուր թվաքանակում և կենսազանգվածում ունեցել է համապատասխանաբար՝ 10 և 13% մասնաբաժին: Աչքի են ընկել նաև <i>Aphanothece clathrata</i>-ն (10 և 7%), <i>Sphaerocystis schroeterii</i>-ն (7 և 9.6%), <i>Stephanodiscus hantzschii</i>-ն (5 և 6.5%):</p> <p>Այսպիսով, Սևանա լճի ֆիտոպլանկտոնային համակեցության նախնական հետազոտությունը վերհանել է լճի երկու հատվածներում պլանկտոնային ջրիմուռների զարգացման որոշակի տարբերություններ, որոնք, ըստ երևույթին, պայմանավորված են նշված բիոտոպերում կենսապայմանների տարբեր ռեժիմների առկայությամբ,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ամռան և աշնան սեզոնների նմուշների հետազոտությունը կարող է որոշակիորեն ամբողջացնել ջրիմուռների տարեկան զարգացման առանձնահատկությունները:</p> <p style="text-align: center;"><u>Մակրոֆիտներ</u></p> <p>Մակրոֆիտային հանրույթի հետազոտությունների ընթացքում Սևանա լճում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 8 ընտանիքների պատկանող 10 տեսակ, որոնցից 5-ը կրիպտոգամային և 5-ը անոթավոր բույսեր են: Ըստ էկոլոգիական դասակարգման, գրանցված բոլոր տեսակները հիդատոֆիտ բույսեր են:</p> <p>Հանդիպման հաճախականությամբ և առատությամբ Փոքր Սևանում գերիշխել է <i>Ceratophyllum demersum</i> տեսակը:</p> <p>Մեծ Սևանում գարնանը հանդիպման հաճախականությամբ գերիշխել են խառային ջրիմուռները, իսկ ամռանը առատությամբ՝ <i>Potamogeton. pectinatus</i>, իսկ հանդիպման հաճախականությամբ՝ խառային ջրիմուռները:</p> <p>Մակրոֆիտային հանրույթի գարնանային և ամառային հետազոտությունները ցույց են տվել, որ Սևանա լճում մակրոֆիտային</p>
--	--	--	--	--	--	---

						<p>գոտին ձգվել է 0-10մ խորություններ, տեղ-տեղ հասնելով 15մ-ի: Սևանա լճում գերիշել են <i>Myriophyllum spicatum</i> L., <i>Ceratophyllum demersum</i> L., <i>Cladophora glomerata</i> (L.) Kütz, <i>Potamogeton perfoliatus</i> L. <i>P. pectinatus</i>, <i>Chara</i> sp. տեսակները: Հանդիպման հաճախականությամբ աչքի են ընկել խառային ջրիմուռները, սակայն ամռանը լճի «ծաղկման» հետևանքով մակրոֆիտների աճը դանդաղել է, իսկ համեմատաբար մեծ խորություններում խառային ջրիմուռները քայքայվել են:</p> <p><u><i>Չոռպլանկտոնային համակեցություն</i></u></p> <p>Սևանա լճում Չոռպլանկտոնային համակեցությունների ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել են Չոռպլանկտոնի 3 հիմնական խմբերի ներկայացուցիչների 12 տեսակ՝ 5 տեսակի անվակիր (Rotifera), 1 տեսակի ճյուղաբեղավոր (Cladocera) և 6 տեսակի թիոտանի խեցգետնակերպեր (Copepoda):</p> <p>Չոռպլանկտոնի տեսակային կազմի վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ Սևանա լճում նախորդ՝ 2017թ-ի համեմատ տեղի է ունեցել տեսակային կազմի նվազում՝</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համակեցությունից դուրս է մղվել <i>Daphnia (Ctenodaphnia) magna</i>-ն: Թիոտանիների տեսակային կազմը պահպանվել է:</p> <p><u>ԿԵՆՍԱՉԱՆՉՎԱԾԻ</u> արժեքների վերլուծությունը ցույց տվեց, որ կենսազանգվածի առավելագույն արժեք գրանցվել է Հայրավանքի լիթորալում, որն ի դեպ մոտ 8 անգամ ավելի ցածր է նախորդ տարվա համեմատ: Գերկշռող տեսակ է հանդիսացել <i>Acanthodiaptomus denticornis</i> ֆիլտրատոր:</p> <p>Բարձր է եղել կենսազանգվածը նաև ցանցավանդակներին հարող տարածքում, որտեղ կրկին գերակշռել է <i>Acanthodiaptomus denticornis</i> (27%)- ը:</p> <p>Հարկ է նշել, որ կենսազանգվածի արժեքները նախորդ տարվա համեմատ կտրուկ ընկել են, քանի որ նվազել է խոշոր ֆիլտրատորների քանակը:</p> <p>Այսպիսով՝ ըստ 2017թ-ի գարնանը կատարված քանակական հետազոտությունների արդյունքների, կարող ենք եզրակացնել, որ Սևանա լճում տեղի է ունեցել զոոպլանկտոնային համակեցության կենսազանգվածի կտրուկ նվազում՝ կապված <i>Daphnia</i></p>
--	--	--	--	--	--	--

						<p>(Ctenodaphnia) magna տեսակի անհետացման հետ: Վերջինս հավանաբար ձկնային հանրույթի քանակի ավելացման հետևանք է:</p> <p><u>Հատակային ֆաունա</u></p> <p>2018թ. հատակային ֆաունայի ուսումնասիրությունների ընթացքում լճում գրանցվել է կենդանիների 27 տեսակ. 4 տեսակ սակավախոզան որդեր (Oligochaeta), 3 տեսակ տզրուկներ, խեցգետնակերպերի (Crustacea), միօրիկների (Ephemeroptera)և ճպուռների (Odonata) մեկեկան տեսակ, 10 տեսակ բզզան մոծակներ (Chironomidae), երկփեղկ փափկամարմինների (Bivalvia) 3 տեսակ և 4 տեսակ փորոտանի փափկամարմիններ (Gastropoda):</p>
	3)«Սևան» ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպում	ՀՀ բնապահ պանության նախարարու թյուն	ՀՀ արտակարգ իրավիճակ ների նախարարու թյուն ՀՀ	2018թ. և շարունակական	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցների և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 527-Ն, 2012 թ. հունիսի 7-ի N-752-Ն և 2015թ. հոկտեմբերի 1-ի N1122-Ն որոշումներով առանձնացված 8 հանրային լողափերից N1, N2, N3 լողափերի գործունեությունը: Լողափերը կահավորվել են տապալաններով, հովանոցներով,

				<p>առողջապահության նախարարություն</p> <p>«Սևան» ազգային պարկ»- ՊՈԱԿ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնք (համաձայնությամբ)</p>		<p>զուգարաններով, խաղահրապարակներով, ավտոկայանտեղիներով, հանդերձարաններով, նստարաններով, բուժկետով, փրկարարական կետով: Լողափնյա սեզոնի ընթացքում հսկողություն է իրականացվել լողափերում անվտանգության կանոնները և պատշաճ մաքրությունը պահպանելու ուղղությամբ: Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2018թ. ֆինանսական միջոցների բացակայության պատճառով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից չի կազմակերպվել մյուս հանրային լողափերի գործունեությունը:</p> <p><u>Գեղարքունիքի մարզպետարան</u></p> <p>Ծովագյուղ համայնքի վարչական տարածքի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կառուցման նոր աշխատանքներ 2018թ. չեն կատարվել:</p> <p><u>Առողջապահության նախարարություն</u></p> <p>Սևանա լճի և լիճ թափվող գետերի ռեկրեացիոն գոտիների հատվածներից կատարվել է բաց ջրամբարների ջրի որակի 663 նմուշի մանրէաբանական, 583 նմուշի սանիտարա-քիմիական և 564 նմուշի մակաբուժաբանական հետազոտություններ: Հետազոտված</p>
--	--	--	--	--	--	---

2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ

2.1	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառ-մաքրման աշխատանքների իրականացում, ափամաքրման աշխատանքների կազմակերպման նոր մեխանիզմների ներդրում	լճի շրջակայքի շուրջ 80,24 հա անտառաշերտերի մաքրում, աշխատանքների կազմակերպման համար նոր մեխանիզմների ներդրում	«Բնապահպանության նախարարություն»	«Գեղարքունիքի մարզպետարան»	2018թ. և 2019թ. շարունակական	«ՀՀ պետական բյուջե՝ «Սևանա լճի ջրածակ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագիր՝ 117,062.0 հազ.դրամ»	<p><u>Բնապահպանության նախարարություն</u></p> <p>Պայմանավորված Սևանա լճի ջրածակ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածակ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով նախկինում մաքրված տարածքների հետ, լուծվել են «2018-2022 թվականների ժամանակահատվածի կարիքների համար՝ Սևանա լճի ջրածակ անտառտնկարկների մաքրման աշխատանքների» ձեռքբերման</p>
-----	---	---	----------------------------------	----------------------------	------------------------------	--	---

						<p>նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01», Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 2018 թվականի ապրիլի 11-ին բնապահպանության նախարարության և քաղաքացի Անդրանիկ Ղուլիջանյանի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/28» և Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 2018 թվականի մայիսի 11-ին բնապահպանության նախարարության և «ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրերով պայմանագրերը և այդ նպատակով 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության</p>
--	--	--	--	--	--	--

						<p>կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և «ՀՀ բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1452-Ն որոշման համաձայն նպատակաուղղվել են՝</p> <ul style="list-style-type: none"> - 30000.0 մլն դրամը որպես դրամաշնորհ հատկացվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ մեկ հատ հատուկ բեռնատար ամենագնաց ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով, - 73542.0 մլն դրամը որպես դրամաշնորհ հատկացվել է «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ կազմակերպությանը պատկանող 539.1 քառ. մետր տարածքում տեղակայված կենտրոնական լաբորատորիայի վերակառուցման նպատակով, - 12720.0 մլն դրամ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ՝ հետագայում նախարարության առաջնահերթություններից և կարևորություններից ելնելով այլ
--	--	--	--	--	--	--

							ծրագրերին ուղղելու պայմանով:
2.2	Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում	լճի շրջակայքում անտառաշերտի հիմնում. հատուկ տեխնիկայի կիրառմամբ՝ ջրածածկման ենթակա տարածքներից՝ 1902.5մ բացարձակ նիշից վերև գտնվող անտառտնկարկները մաքրելիս՝ կենսունակ արժեքավոր ծառատեսակների տեղափոխում նոր հիմնվող անտառաշերտի վայր	ՀՀ բնապահ պանության նախարարություն	ՀՀ Գեղարքու նիքի մարզպետարան	2018թ.և շարունակական	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<u>Բնապահպանության նախարարություն</u> «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 40-ամյա հորելյանին նվիրված միջոցառումների շրջանակներում՝ Մարտունու մասնաճյուղի Երանոսի տեղամասում իրականացվել է 1.0 հա մակերեսով սոճիների պուրակի հիմնում, որի համար որպես տնկանյութ օգտագործվել է «Սևան» ազգային պարկի տարածքի բնական վերածից ստացված 4-5 տարեկան տնկիներ: Մարտունու մասնաճյուղի Մարտունու տեղամասում տեղի է ունեցել 5 հա մակերեսով անտառտնկում, որն ամբողջությամբ իրականացվել է «Սևան» ազգային պարկի տարածքում հիմնված տնկարանային տնտեսությունում աճեցված 1 տարեկան բարդի տեսակի ծառերի տնկիներով: Սևանի մասնաճյուղի Ախթամար տեղամասում՝ «Հայ-բելառուսական բարեկամության անտառի» հիմնման

						<p>ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 9.95 հա մակերեսով ծառատունկ, ինչպես նաև իրականացվել են ծառատունկի համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ տարածքի ցանկապատում, ակոսների պատրաստում, սարքավորումների ձեռքբերում: Որպես տնկանյութ օգտագործվել են 1 տարեկան սոճենու տնկիներ, որոնք տրամադրվել են Բելառուսի Հանրապետության կողմից: Ամռանը տնկարկում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են խնամքի աշխատանքներ, իսկ նոյեմբեր ամսին կատարվել են լրացման աշխատանքներ՝ տնկվել է 7000 հատ սոճենու ծառեր՝ պարկի տարածքի բնական վերաճից, ևս 700 հատ բարդի տեսակի ծառեր տնկվել են ցանկապատի երկայնքով: Որպես տնկանյութ ծառայել են «Սևան» ազգային պարկի տարածքի բնական վերաճից ստացված 2-3 տարեկան սոճենիներ և Մարտունու մասնաճյուղի տնկարանում աճեցված բարդու տնկիներ:</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Անտառների հրդեհաանվտանգության և սանիտարական վիճակի բարելավման նպատակով 2018թ. ընթացքում «Սևան» ազգային պարկի Սևանի, Վարդենիկի, Նորատուսի և Մարտունու մասնաճյուղերում իրականացվել են նաև քամատապալ, ձյունակոտոր, չորացած, ջրի մեջ տապալված և տապալման եզրին գտնվող ծառերի սանիտարական հատման աշխատանքներ:</p> <p><i>Գեղարքունիքի մարզպետարան</i></p> <p>Ջրածածկման ենթակա տարածքներից՝ 1902,5մ բացարձակ նիշից վերև գտնվող անտառտնկարկները մաքրելիս՝ կենսունակ արժեքավոր ծառատեսակների տեղափոխում նոր հիմնվող անտառշերտի վայր չի իրականացվել:</p>
2.3.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած	ՀՀ բնապահ պանության նախարարություն	ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձ	2018թ.և շարունակական	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p> <p><i>Բնապահպանության նախարարություն</i> «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2018թ. պետական բյուջեի միջոցների հաշվին Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինություններ և</p>

	շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում	շինությունների ու ենթակառուցվածքների մաքրում		նաժողով (համաձայնությամբ)			ենթակառուցվածքներ չեն ապամոնտաժվել: <u>ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով</u> իրականացրել է Սևանա լճի էկոհամակարգի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման, վերարտադրության և օգտագործման վերաբերյալ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և ՓԲԸ-ի կողմից ներկայացված ծրագրերի, նախագծերի և տեխնիկա-տնտեսական առաջարկությունների փորձագիտական եզրակացություններ: Կազմակերպվել է 13 նիստ և համապատասխան արձանագրությունները (30 թերթ) ներկայացրել է բնապահպանության նախարարություն:
2.4	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի	կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային միա (համաձայնությամբ)	2018թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ «Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ»	Բնապահպանության նախարարության և ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջև 2018թ. ապրիլի 16-ին կնքվել է «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների» կատարման

<p>չափաքանակներ ի սահմանում, ծվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադր ման պայմանների ուսումնասի րում, բնական ծվադրավայ րերի առկա վիճակի գնահատում, վերականգ նման ուղիների մշակում</p>	<p>չափաքանակներ ի սահմանում, ծվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ծվադրա վայրերի առկա վիճակի գնահատում, վերականգ նման ուղիների մշակում</p>			<p>նությամբ) ՀՀ Գեղար քունիքի մարզպե տարան</p>		<p>ծրագրի շրջանակներում՝ 7,624.3 հազ դրամ և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p>	<p>պետական գնման պայմանագիրը (NՀՀ-ԲՆ-ՊԸԱՇՁԲ-18/02): ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից մշակվել և բնապահպանության նախարարության կողմից հավանության է արժանացել «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում նախատեսվող գիտական որսի ժամանակացույցը: ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սույն թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացվել է ավարտական հաշվետվություն (66 թերթ): <u>ԳԱԱ ԿՀԷԳԿ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ</u> 2018թ. նոյեմբերի 7-9 ժամանակահատվածում իրականացվել է ծավալուն ձկնաբանական հետազոտություններ, գրանցվել են ինչպես ձկնատեսակների հորիզոնական այնպես էլ ուղղահայաց</p>
---	---	--	--	---	--	---	---

						<p>բաշխումները: Սարքի արտաձման համակարգը արձանագրել է նաև ձկան առանձնյակների և հանդիպող վտառների չափերը: Տվյալների մշակումը և քարտեզագրումը իրականացվել է SPSS statistics 22, BaseCamp և ArcGIS 10.6 ծրագրային փաթեթների միջոցով: Արձանագրված քանակական ցուցանիշների մաթեմատիկական- վիճակագրական վերլուծությունների և ԱՏՀ միջոցով արդյունքների ինտերպոլյացիայի հիման վրա կատարվել է ընդհանուր ձկնային պաշարների զանգվածային գնահատում:</p> <p>Հաշվի առնելով սիգի սեզոնային միգրացիայի առանձնահատկությունները, առավել մանրակրկիտ հետազոտվել է լճի պելագիալի գոտին: Վիճակագրական վերլուծությունների հիման վրա կատարվել է կենսազանգվածի հորիզոնական բաշխման մոդելավորում: Այս ժամանակահատվածում սիգն ավելի մեծ կուտակումներ է ունեցել Փոքր Սևանի արևմտյան գոտում (Նորավանք-Այրիվանք) և Մեծ Սևանի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>հարավային հատվածի կենտրոնական գոտում: Տվյալների վիճակագրական վերլուծությունից պարզվել է, որ հետազոտությունների ժամանակա հատվածում ձկները հանդիպել են 2մ-ից մինչև 47մ խորությունների միջակայքում, ընդ որում, ձկները գրեթե հավասար մասնաբաժիններով կուտակված են եղել 10-30մ խորություններում, ինչը բնորոշ է սիգի տվյալ ժամանակահատվածում: Ձկների տարածական բաշխման վերլուծությունը Փոքր Սևանի և Մեծ Սևանի համար ցույց է տալիս, որ նոյեմբերի սկզբին ընդհանուր ձկնային պաշարների հարաբերակցությունը 1:2.4 է ի օգուտ Մեծ Սևանի, սակայն Փոքր Սևանում միջին խտությունը 1հա տարածքի համար մոտ 3կգ ավելի մեծ է: <i>Ընդհանուր պաշարների մեջ արդյունագործական պաշարների մասնաբաժինը կազմել է մոտ 25%:</i></p> <p style="text-align: center;"><u>Ս Ի Գ</u></p> <p>Սիգի պաշարների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ տարվա համեմատ դիտվել է սիգի ընդհանուր պաշարների մոտ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>33% աճ և 2018թ.-ին ձկան պաշարները պելագյալում հասել են 2948.5տ: Ընդ որում, Փոքր Սևանում եղել է 862.5տ, իսկ Մեծ Սևանում՝ 2086տ: Շարունակվող գերորսի պատճառով արդյունագործական նշանակության</p> <p>պաշարների հարաբերական մասնաբաժնի աճ չի նկատվել և մնում է ընդհանուր պաշարների 25% սահմաններում, ինչի արդյունքում արդյունաբերական նշանակության պաշարների աճը ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ մնացել է ցանկալի մակարդակից ցածր և կազմել է մոտ 737տ: Ընդ որում, Փոքր Սևանում արդյունագործական պաշարները կազմել են 215.6տ, իսկ Մեծ Սևանում՝ 521.5տ: 2018թ. բազմացող վտառում 30.3 %-ը կազմել են էգ առանձնյակները, 69,7%-ը՝ արու առանձնյակները: Ի տարբերություն 2017թ. 2018թ. բազմացող վտառում էգ առանձնյակների քանակն ավելացել է շուրջ 3 անգամ:</p> <p>Կատարվել է նաև 2016, 2017 և 2018թթ. որսված և հետազոտված</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ձկների երկարության համեմատական վերլուծություն: Արդյունքում պարզվել է, որ 2016-ից մինչև 2018թ. նկատելիորեն աճել է որսում երիտասարդ առանձնյակների մասնաբաժինը: Նույն պատկերը նկատվել է նաև ձվադրող վտառում: Մեծ չափերի (42սմ և ավելի երկարություն) ձկներ հանդիպել են եզակի առանձնյակներով:</p> <p style="text-align: center;"><u>ԱՐԾԱԹԱՓԱՅԼ ԿԱՐԱՍ</u></p> <p>Նախորդ տարվա համեմատ Սևանա լճում կրճատվել են կարասի պաշարները: 2018թ.-ին այն կազմել է մոտ 30-35տ: Վերջինս հիմնականում կուտակվում է լիթորալի և սուբլիթորալի գոտիներում:</p> <p style="text-align: center;"><u>ԻՇԽԱՆ</u></p> <p>Կատարվել է Իշխանի գիրացող վտառի ուսումնասիրություն (գծային և քառային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն) 2018թ. լճից որսվել և հետազոտվել է գեղարքունու 4 (երկարությունը 23-27 սմ,զանգվածը՝ 113-214 գ) և ամառային իշխանի 1 առանձնյակ (երկարությունը՝ 23,5 սմ,</p>
--	--	--	--	--	--	--

						<p>զանգվածը՝ 118 գ): Հետազոտված գեղարքունու 4 առանձնյակից միայն մեկ առանձնյակն է եղել էգ: Հետազոտված մյուս առանձնյակները, այդ թվում ամառային իշխանը եղել են արու: Հետազոտման արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված գեղարքունու առանձնյակները ընթացիկ տարում չեն բազմանա: Հետազոտվել է իշխանների սննդառությունը: Նախորդ տարիներին կատարված հետազոտությունների ժամանակ Սևանի իշխանի մայրական կազմի ուսումնասիրության ժամանակահատվածում ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձվադրող եզակի առանձնյակներ հանդիպել են, որոնց քանակը բավարար չէ Սևանի իշխանի բնական վերարտադրությունը ապահովելու համար: 2018թ. գեղարքունու ձվադրաման ժամանակահատվածում Սևանա լճից որսվել և ուսումնասիրման է ենթարկվել գեղարքունու 1 արու առանձնյակ (երկարությունը՝ 30 սմ, զանգվածը՝ 225գ, սեռական արգասիքները գտնվել են հաունացման IV փուլում): 2018 թ. լճում</p>
--	--	--	--	--	--	---

						<p>կատարված հետազոտությունների ժամանակ սեռահասուն իշխանի էգ առանձնյակ չի հանդիպել: Լճում շարունակվող ինտենսիվ որսագողության արդյունքում իշխանի պաշարները կրճատվել են, հավասարվելով 2015-16թթ. մակարդակին՝ կազմելով մոտ 1-1.5տ:</p> <p style="text-align: center;"><u>ԿՈՂԱԿ</u></p> <p>2018թ. կատարված գիտարշավների ժամանակ Սևանա լճից որսվել և կենսաբանական վերլուծության է ենթարկվել կողակի 4 առանձնյակ, որոնց երկարությունը կազմել է 15.0-25.0սմ, զանգվածը՝ 60.55-289.20գ: Սեռերի հարաբերությունը կազմել է 1♀:1♂: Կողակները սնվել են բուսական դետրիտով և ֆիտոպլանկտոնային օրգանիզմներով (գերակայել են թելանմանները):</p> <p style="text-align: center;"><u>Բեղաձուկ</u></p> <p>2018թ. կատարված գիտարշավների ժամանակ Սևանա լճից որսվել և կենսաբանական վերլուծության է ենթարկվել բեղաձկան 29 առանձնյակ՝ 25 առանձնյակ Մեծ Սևանից և 4 առանձնյակ Փոքր Սևանից: Ի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>տարբերություն գետային պոպուլյացիայի, լճում սեռերի հարաբերությունը եղել է այլ՝ գերակայել են էգ առանձնյակները ինչպես Փոքր Սևանում, այնպես էլ՝ Մեծ Սևանում: Սևանա լճում բեղաձկները սնվել են կողալողերով, միօրյակների և բզզան մոծակների թրթուրներով, ինչպես նաև թելանման ջրիմուռներով:</p> <p>Սևանի կողակի և բեղաձկան քանակները լճում բավականին քիչ են և նրանց պոպուլյացիաները հատուկ պահպանության և վերականգնման կարիք ունեն:</p> <p>Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի էնդեմիկ ձկնատեսակների (իշխանի, կողակի, բեղլուի և այլն) ուսումնասիրություն, վիճակի, բնական վերարտադրության գնահատում՝</p> <p>2018թ. իրականացվել են Սևանա լիճ թափվող հիմնական գետերի՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս, Կարճաղբյուր և Մասրիկ, ձկնաբանական ուսումնասիրություններ, իշխանի և</p>
--	--	--	--	--	--	--

						<p>կողակի ձվադրող վտառի (առանձնյակների) հաշվառում, վիճակի գնահատում: Սևան թափվող հիմնական գետերից Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս, Կարճաղբյուր և Մասրիկ գետերում տարբեր սեզոններին կատարած գիտարշավների ժամանակ իշխանի ամառային և գեղարքունի ենթատեսակի ոչ մի սեռահասուն առանձնյակ չի հանդիպել: Վերը նշված գետերից միայն Մասրիկ և Կարճաղբյուր գետերում հանդիպել են իշխանի մանրաձկներ:</p> <p>2018 թ. հունիս ամսին կատարված գիտարշավի ժամանակ Արգիճի գետի վերին հոսանքից որսվել է կողակի 2 սեռահասուն առանձնյակ (1♀ և 1♂), իսկ Ձկնագետ գետից՝ կողակի 2 արու առանձնյակ: Որսված կողակի սեռահասուն առանձնյակները բաց են թողնվել իրենց բնական միջավայր:</p> <p>Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում օտարածին ձկնատեսակների ուսումնասիրություն և էկոհամակարգի վրա ազդեցության</p>
--	--	--	--	--	--	--

						<p style="text-align: center;">գնահատում:</p> <p>2018թ. կատարված հետազոտությունների ժամանակ Սևանա լճի ջրհավաք գետում հանդիպել են 2 օտարածին ձկնատեսակ՝ արևելյան տառեխիկ և արծաթափայլ կարաս:</p> <p>Արևելյան տառեխիկի առանձնյակներ հանդիպել են Ձկնագետ, Արգիճի, Վարդենիս և Մասրիկ գետերում, իսկ արծաթափայլ կարասի առանձնյակներ՝ Ձկնագետ և Արգիճի գետերում: Սևանի ավազանի գետեր ներթափանցած արևելյան տառեխիկը գետերում հանդիսանալով դոմինանտ կամ սուպերդոմինանտ տեսակ, ոչ միայն զբաղեցնում է արժեքավոր և տեղաբնակ ձկնատեսակների էկոլոգիական խորշերը, այլև սնվում է արժեքավոր ձկնատեսակների կողակի, բեղաձկան, իշխանի ձկների և մանրաձկների կերով հանդիսանալով վերջիններիս համար կերային մրցակից:</p> <p style="text-align: center;">Խեցգետնաբանական հետազոտություններ:</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Կատարվել են Փոքր Սևանի՝ Շորժա, Քաղաքային Լողափ, Հայրավանք, Նորաշեն, Լճափ, Բերդկունք, Ծովագյուղ և Մեծ Սևանի՝ Նորատուս, Ծովակ, Նորակերտ, Մարտունի, Ջիլ, Արտանիշ, Լիճք, Դրախտիկ, Ծափաթաղ, Արծվանիստ դիտակետերում: Արդյունահանման ազդեցությունը Սևանա լճի երկարաչանչ խեցգետնի պոպուլյացիայի վրա գնահատելու նպատակով 2018թ. կատարվել է տարբեր որսամիջոցներով իրականացված որսի չափատարիքային կառուցվածքի հետազոտություն: Սևանա լճում երկարաչանչ խեցգետնի արդյունահանման գործընթացը չինական ծալովի և զսպանակաձև խեցգետնորսիչներով շարունակվել է: Պասիվ որսագործիքների կիրառությունը խեցգետնի պոպուլյացիայի վրա խիստ բացասաբար է անդրադարձել: Զսպանակավոր խեցգետնորսիչներով կատարված որսի արդյունքում ոչ արդյունագործական կենդանիների մասնաբաժինը 2017թ. կազմել է մոտ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>22%, 2018-ին այն աճել է հավասարվելով 38%, չինական ծախսերի խեղճացումը կատարված որսի արդյունքում 2017թ.-ին ոչ արդյունագործական չափի՝ մինչև 9սմ երկարությամբ կենդանիները կազմել են որսաբաժնի 46.7%-ը (միջին ցուցանիշ), իսկ 2018թ. այդ ցուցանիշը հավասարվել է 56%: Նման որսագործիքներով խեղճացումի արդյունահանման արդյունքում պոպուլյացիան զրկվում է համալրման և վերականգնման հնարավորությունից, որի հետևանքով տարեցտարի խորանում է արդյունագործական պաշարների խզման վտանգը: 2018թ. խեղճացումաբանակա հետազոտությունները ցույց են տալիս, որ լճում շարունակվում է երկարաչանչ խեղճացումի պաշարների կրճատման միտումը: Խեղճացումի արդյունագործական պաշարը Սևանա լճում 2017թ. կազմել է 2600տ, 2018թ. այն ավելի ցածր է՝ 2312 տ : Խեղճացումի թվաքանակի կրճատման պատճառներից է նաև խեղճացումի պոպուլյացիայում ժանգախտ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>հիվանդության տարածումը: Սակայն խեցգետնի պաշարների շարունակական կրճատումը հիմնականում վատ կառավարվող որսի արդյունք է: 2018թ. Սևանա լիճը խեցգետնարդյունավետության ցուցանիշներով դասվում է միջին արդյունավետության լճերի շարքում: Սևանա լճի խեցգետնի պոպուլյացիայի վիճակը տարեցտարի վատանում է: Վերոհիշյալ հիդրոբիոնտի արդյունագործական պաշարների խզումը կանխելու նպատակով պետք է ձեռք առնել հրատապ միջոցառումներ՝</p> <ul style="list-style-type: none"> - Սևանա լճում արգելել խեցգետնի որսը չինական ծալովի և զսպանակաձև խեցգետնորսիչներով ու թարփերով, թույլատրելով որսը միայն կասպիական խեցգետնորսիչներով և ցանցերով: - արգելել ոչ արդյունագործական չափի կենդանիների որսը, վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս, - արգելել մի ջրամբարից մեկ այլ ջրամբար խեցգետնիների տարաբնակեցումը, - ակտիվ պայքար մղել որսի կարգը խախտողների դեմ: Խստացնել տույժերի և տուգանքների
--	--	--	--	--	--	---

						<p>համակարգը,</p> <ul style="list-style-type: none"> - խեցգետնի որսի արգելք սահմանել նրա բազմացման ամենաինտենսիվ շրջանում՝ հունիս-օգոստոս ժամանակահատվածում, - հիմք ընդունելով Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարների կրճատման միտումը, 2019թ. համար խեցգետնի թույլատրելի որսաչափ սահմանել 350տ: <p>Խոշոր ջրային էկոհամակարգերի համար խեցգետնի ընդհանուր զանգվածի գնահատական չի տրվում, քանի որ հետազոտությունների արդյունքները հիմնվում են արդյունահանման տվյալների վրա, որոնք առնչվում են պոպուլյացիայի միայն արդյունագործական մասին: Ընդհանուր զանգվածի գնահատման համար կարևոր է իմանալ տարբեր տարիքային խմբերի բնական մահացությունը, ինչը խոշոր ջրամբարներում գործնականորեն անհնարին է որոշել: Իսկ այլ ջրամբարների ցուցանիշները Սևանա լճի համար կիրառելի չեն: Իրականացված խեցգետնաբանական հետազոտությունների ընթացքում Սևանա լճի գետերում երկարաչանջ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Խեցզետին չի հայտնաբերվել:</p> <p>Իրականացվել է Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի ուսումնասիրություն, դրանց առկա վիճակի գնահատում: Սևանա լճի ավազանի բնական ձվադրավայրերի վիճակի գնահատման նպատակով հետազոտություններ են իրականացվել նաև լիճ թափվող Մասրիկ, Կարճաղբյուր (Մաքենիս), Վարդենիս, Արգիճի, Լիճք, Գավառագետ և Ձկնագետ գետերում: Հետազոտվել են սննդային շղթայի այն օղակները, որոնք անմիջականորեն արտացոլում են գետերի էկոլոգիական վիճակը և պայմանավորում են ձկան աճի, վերարտադրման և սննդառության առանձնահատկությունները:</p> <p>Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր</p> <p>2018 թվականի ընթացքում իրականացված հետազոտությունները փաստում են, որ սիգի որսաբաժնում գիրացող և ձվադրող վտառներում շարունակվում է ձկների երիտասարդացումը, ինչը անկառավարելի ձկնորսության</p>
--	--	--	--	--	--	--

						<p>հետևանք է: Ինչպես անցած երկու տարիներին, այնպես էլ 2018թ. գարնան ամիսներին (գիրացող վտառում) որսում գերակայել են 1+ տարիքի ձկները:</p> <ul style="list-style-type: none"> • Վերջին տարիներին նկատվում է սիգի կենսազանգվածի որոշակի աճ, սակայն ներկայիս տարերային որսի պայմաններում այս ձկնատեսակի պոպուլացիան դեռևս շարունակում է մնալ որսի ուժեղ ճնշման տակ, ինչը փաստում են հետազոտությունների ընթացքում սիգի պոպուլացիայում գրանցված տարիքային կազմի ցուցանիշները: • Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների ձվադրող առանձնյակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս ձկնատեսակների վիճակը գնալով ավելի է վատանում պայմանավորված ձվադրավայր հանդիսացող գետերի տարեց տարի կենսապայմանների վատթարացման հետ: • Գնալով պակասում են դեպի գետեր ձվադրման գնացող առանձնյակների թվաքանակը, իսկ ձվադեղուց հետո էլ ամռան ամիսներին գետերն այնքան սակավաջուր են դառնում, որ ստեղծում են անբարենպաստ կենսապայմաններ մանրաձկների գետերում գոյատևելու
--	--	--	--	--	--	--

						<p>համար:</p> <ul style="list-style-type: none"> • Տարվա ընթացքում Սևանի ջրհավաք ավազանի գետերը դառնում են սակավաջուր ոչ միայն անկառավարելի ջրառի, այլև ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում: • Սևանի իշխանի ներկայիս բնական վերարտադրություն դեռևս տեղի չի ունենում և սեռահասուն ձկներ հանդիպում են գետերում եզակի առանձնյակներով: <p>Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր</p> <ul style="list-style-type: none"> • 2018թ. եղանակային պայմանների արդյունքում սիգ ձկնատեսակի ձվադրման շրջանը, ամենայն հավանականությամբ, կընդգրկի դեկտեմբերի 20-ից հունվարի 15-ը ժամանակահատվածը: Առավել ինտենսիվ գործընթաց կարելի է սպասել դեկտեմբերի վերջ-հունվարի սկիզբ ժամանակահատվածում: Ուստի խիստ կարևորվում է այս ժամանակահատվածում որսագողության դեմ համատեղ պայքարի ակտիվացումը: • Սևանա լճի ավազանի էնդեմիկ ձկնատեսակների գետային կենսաձևերի գոյության ապահովման համար անհրաժեշտ է գետերում կառավարել գյուղատնտեսական և էներգետիկ նպատակներով
--	--	--	--	--	--	--

						<p>իրականացվող ջրառը:</p> <ul style="list-style-type: none"> Կողակի և բեղաձկան պաշարները լճում գրեթե սպառված են, ուստի այս ձկնատեսակների հետագա գոյությունը ապահովելու համար անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել նրանց բնական պոպուլյացիաների պահպանության և արհեստական վերարտադրության ուղղությամբ: Հարկ է խեցգետնի արդյունահանման ընթացքում լճում կիրառել այնպիսի խեցգետնորսիչներ, որոնք կբացառեն նշված ձկնատեսակների մանրաձկների որսը տվյալ որսագործիքներով: Անհրաժեշտ է նաև խստորեն պահպանել Սևանի իշխանի բնական պոպուլյացիան ոչ միայն լճում, այլև գետերում, ինչը կբերի ոչ միայն իշխանի քանակի ավելացմանը, այլև անցանկալի ձկնատեսակների քանակի կրճատմանը, քանի որ իշխանը սնվում է նաև անցանկալի ձկնատեսակներով: <p style="text-align: center;"><u>Ամփոփ եզրակացություն</u></p> <p>Ընդհանուր պաշարների մեջ արդյունագործական պաշարների մասնաբաժինը կազմել է մոտ 25%:</p> <p>Սիգի պաշարների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>նախորդ տարվա համեմատ դիտվել է սիգի ընդհանուր պաշարների մոտ 33% աճ և 2018թ.-ին ձկան պաշարները պելագյալում հասել են 2948.5տ: Արդյունագործական նշանակության պաշարների աճը ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ մնացել է ցանկալի մակարդակից ցածր և կազմել է մոտ 737տ:</p> <p>Հաշվի առնելով լճում որսագողության առկայությունը, ինչպես նաև պաշարների վերականգնման դանդաղ տեմպերը նպատակահարմար ենք գտնում <i>2019 թ. Սևանա լճում շարունակել սիգի որսի արգելքը</i>:</p> <p>Կարասի պաշարները 2018թ.-ին այն կազմել է մոտ 30-35տ:</p> <p>Իշխանի պաշարները կրճատվել են, հավասարվելով 2015-16թթ. մակարդակին՝ կազմելով մոտ 1-1.5տ:</p> <p>Սևանի կողակի և բեղաձկան քանակները լճում բավականին քիչ են:</p> <p>Իշխանի ամառային և գեղարքունի ենթատեսակի ոչ մի սեռահասուն առանձնյակ չի հանդիպել:</p> <p>Սևանա լճի ջրհավաք գետերում հանդիպել են 2 օտարածին</p>
--	--	--	--	--	--	--

							<p>ձկնատեսակ՝ արևելյան տառեխիկ և արծաթափայլ կարաս: Խեցգետնի արդյունագործական պաշարը 2018թ. 2 312 տ : 2019թ. համար խեցգետնի թույլատրելի որսաչափ է սահմանել 350տ: (Ծավալուն հաշվետվությունը (66 թերթ) ներկայացվել է բնապահպանության նախարարություն):</p> <p><i>Բնապահպանության նախարարության</i> ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՇՁԲ-18/02» ծածկագրի պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով՝ 7590.0 հազար դրամ: Տնտեսվել է 343.0 հազար դրամ:</p>
2.5	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների	արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի,	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2018թ. և շարունակական	օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p><i>էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</i></p> <p>Գեղարքունիքի մարզում իսպանական «Աքսիոնա էներգիա Գլոբալ Էս. Էլ.» և Արաբական միացյալ էմիրության «Աքսես Ինֆրա Սենթրալ Էլժա</p>

<p>սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում</p>	<p>քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ՀՀ Վայոց ձորի մարզպետարան</p>			<p>Լիմիթեր» ընկերությունները նախատեսում են կառուցել համապատասխանաբար 100-150 ՄՎտ և 150 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայաններ: 2018 թվականին նշյալ ընկերությունների կողմից շարունակվել են իրականացվել քանու ներուժի գնահատման աշխատանքներ: 2018 թվականին «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերությունը լիազոր մարմնին է ներկայացրել նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում, որը գտնվում է քննարկման փուլում: Գեղարքունիքի մարզում կառուցման փուլում են գտնվում մինչև 1 ՄՎտ դրվածքային հզորությամբ 3 արևային ֆոտովոլտային կայաններ՝ մոտ 3 ՄՎտ գումարային հզորությամբ և 2 հողմային կայաններ՝ մոտ 5 ՄՎտ գումարային հզորությամբ, ինչպես նաև՝ կառուցման փուլում են գտնվում մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ 4 արևային ֆոտովոլտային կայաններ՝ մոտ 20 ՄՎտ գումարային հզորությամբ: Կառավարության կողմից հավանության արժանացած՝ Արևային</p>
---	---	--	--	--	--	--

						<p>Ֆոտովոլտային (ՖՎ) կայանի կառուցման ներդրումային ծրագրի առաջին փուլում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկի տեղանքում կառուցել «Մասրիկ-1» արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայան՝ շուրջ 55 ՄՎտ հզորությամբ: Այնուհետև հաջորդելու են ևս 5 կայանների կառուցումը՝ ընդհանուր մոտ 60 ՄՎտ հզորությամբ: 2018 թ. մարտի 21-ին ավարտվել է ՀՀ-ում Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի համար հայտարարված միջազգային մրցույթը: Մրցույթի պայմանների համաձայն նվազագույն սակագին է ներկայացրել նիդեռլանդական «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչըս» և իսպանական «ԷֆէսԷլ Սոլար» ընկերություններից կազմված կոնսորցիումը: Այն կազմում է 4.19 դոլար ցենտ 1 կՎտxժ- ի համար (մոտ 20.11 ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի: 2018թ. հուլիսի 18-ին՝ ստորագրվեց «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային</p>
--	--	--	--	--	--	--

						<p>Էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» ՀՀ կառավարության աջակցության համաձայնագիրը: 2018 թվականի հոկտեմբերի 25-ին «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ն (կառուցապատող) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացել է Էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության լիցենզիա:</p> <p>«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2018թ.-ի ընթացքում իրականացվել են 1495 մետր «Նորաշեն» և 800 մետր «Լճաշեն» 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի, համապատասխանաբար՝ թվով 34 և 28 հենասյուների տեղափոխման աշխատանքներ:</p> <p>2018թ. ընթացքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն Էլեկտրաէներգիա են արտադրում 12</p>
--	--	--	--	--	--	---

						<p>փոքր ՀԷԿ-եր՝ գումարային 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ, որոնց էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը կազմում է շուրջ 68 մլն կՎտժ :</p> <p><u>Գյուղատնտեսության նախարարությունը</u></p> <p>Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրեր չեն մշակվել:</p> <p><u>Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</u></p> <p>«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության,</p>
--	--	--	--	--	--	--

						<p>տեղական տնտեսական զարգացման ուղղություններով գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 586 աջակցություն:</p> <p>«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում Սևան քաղաքում կազմակերպվել է 1 դասընթաց, որին մասնակցել են 10 սկսնակ գործարարներ: Բացի այդ, Զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ Գեղարքունիքի մարզում գտնվող աշխատաշուկայում անմրցունակ 3 անձանց համար կազմակերպվել է ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթաց, ինչպես նաև գործարար ծրագրերի մշակման խորհրդատվություն: Նշված դասընթացների արդյունքում 6 մասնակիցներ ստացել են պետական գրանցում և սկսել ձեռնարկատիրական գործունեություն: Հինգ սկսնակ գործարարներ ստացել են ֆինանսական աջակցություն՝ սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>շրջանակներում: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 15,4 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 15,9 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ 10% տոկոսադրույքով:</p> <p>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Գործարարության աջակցման գրասենյակի հետ համատեղ Սևան քաղաքում իրականացրել են իրազեկում-խորհրդատվություն Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և հարկային օրենսդրությանն առնչվող, որին մասնակցել են 33 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ: Բացի այդ, ոլորտային բիզնեսներին աջակցության ծրագրի շրջանակներում Կալավան համայնքում գործող 6 ՓՄՁ սուբյեկտներից 5-ին դրամաշնորհի տեսքով տրամադրվել է Արևային ջրատաքացուցիչ, իսկ 1 ՓՄՁ սուբյեկտի՝ Սլայդ դուռ/լուսամուտ: «Գործընկերություն հանուն</p>
--	--	--	--	--	--	---

						<p>գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքում ավարտին է մոտենում տուրիստական կենտրոնի կառուցման աշխատանքները:</p> <p><u>Քաղաքաշինության կոմիտեն</u></p> <p>համայնքների գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքները համակարգվում է Քաղաքաշինության կոմիտեի կողմից, որի շրջանակներում 2018 թվականի ընթացքում փոփոխություններ են կատարվել Գեղարքունիքի մարզի Բերդկունք, Ծովագյուղ, Լճաշեն, Վարդենիս, Մարտունի, Շողակաթ, Վարդենիկ, Գավառ համայնքների գլխավոր հատակագծերում:</p> <p><u>Գեղարքունիքի մարզպետարան</u></p> <p>Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի համայնքներն ունեն սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրեր: ՀՀ կառավարության 2017թ.-ի հուլիսի 6-ի N29-16 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել մարզի</p>
--	--	--	--	--	--	---

							սոցիալ-տնտեսական զարգացման 2017-2025թ. ռազմավարաան ուղղությունները:
2.6	Ձկան պաշարների համալրում	Էնդեմիկ և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ (համաձայնությանը)	«Քննապահ պանության նախարարություն» «Գեղարքունիքի մարզպետարան» «Գիտությունների ազգային ակադեմիա» (համաձայնությանը)	2018թ. և շարունակական	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում	<p><u>Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ</u></p> <p>Հիմնադրամը 2018 թվականի մայիսի 25-ին իրականացրել է Սևանի իշխանի գեղարքունի ենթատեսակի մանրածկան բացթողումը: Բաց է թողվել ընդհանուր թվով 60000 (վաթսուն հազար) հատ 0.64 գրամ միջին զանգվածի մանրածուկ, այդ թվում Կարճաղբյուր գետի ստորին հոսանքում 18500 հատ, իսկ Մասրիկ գետի ստորին հոսանքում՝ 41500 հատ գեղարքունու մանրածուկ: Բացթողնման պահին անկում գրեթե չի եղել:</p> <p>2018 թվականի հոկտեմբերի 16-ին իրականացրել է Սևանի իշխանի ամառային ենթատեսակի 1.2 գրամ միջին զանգվածով թվով 30000 (երեսուն հազար) հատ մանրածկների բացթողումը: Բացթողումն իրականացվել է Ծակքար և Բախտակ գետերի միախառնման հատվածում:</p>

							Բաց թողման պահին անկում գրեթե չի եղել: (Ամփոփ հաշվետվությունը գտնվում է բնապահպանության նախարարությունում):
2.7	«Սևան» ազգային պարկ»-ի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում, հետազոտման	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2018թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկ»-ի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրություններ, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագիր՝ 252,666,4 հազ.դրամ	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ Պահպանություն՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2018թ. ընթացքում կազմվել է 99 իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, որից 69-ը ապօրինի ձկնորսության և ապօրինի խեցգետնի որսի վերաբերյալ, 4 ապօրինի շինարարության, 2 ռեյնջի խախտման, 8 ապօրինի ծառահատման, 3 ապօրինի աղբաթափման, 1 ապօրինի մետաղական տաղավարի տեղադրման, 17 ապօրինի արածեցման դեպքերի վերաբերյալ: Ստուգայցերի ընթացքում առգրավվել է 624 հատ ձկնորսական ցանց, 107 հատ խեցգետնաորսիչ, 1694 հատ սիգտեսակի ձուկ, 254 հատ կարաստեսակի ձուկ և 753 հատ խեցգետին:

		տեխնոլոգիաների կիրառություն					<p>Ձկները հանձնվել են բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժին: Խեցգետինները կենդանի վիճակում բաց են թողնվել լիճ: Առգրավված ցանցերը և խեցգետնաորսիչները սահմանված կարգով համապատասխան հանձնաժողովի կողմից կոչնչացվեն:</p> <p><i>Գիտական բաժին</i></p> <p>ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է Սևանա լիճ թափվող Դրախտիկ, Ձկնագետ, Գացառագետ, Լիճք, Ծակքար, Արգիճի, Մարտունի, Մասրիկ. Վարդենիկ գետերի և Սևանա լճի ջրերի աղտոտվածության մոնիտորինգ, ուսումնասիրվել է նաև Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերում աղիքային ցուպիկների քանակը:</p> <p>Մանրեաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ գնահատվել է գետերի ջրերի էկոլոգիական որակը և սանիտարական վիճակը: Ելնելով մանրէաբանական ցուցանիշներից ստացված արդյունքներից (20°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակ,</p>
--	--	-----------------------------	--	--	--	--	---

						<p>կոլի-ինդեքս) Սևանա լիճ թափվող Ձկնագետ և Դրախտիկ գետերի տարբեր հատվածների ջրերը՝ <u>համաձայն Ռոմանենկոյի</u> մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման՝ դասվում են.</p> <p>Գետ Ձկնագետ՝</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք՝</u> բավական մաքուրից թույլ աղտոտված կարգի - <u>գետաբերան՝</u> թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Դրախտիկ՝</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք՝</u> ըստ կոլի-ինդեքսի՝ չափազանց մաքուր կարգի, ըստ սապրոֆիտ մանրէների՝ բավական մաքուր կարգի, - <u>Դրախտիկ գյուղից մոտ 100մ ներքև՝</u> խիստ աղտոտված կարգի, - <u>գետաբերան՝</u> ուժեղ աղտոտվածից, խիստ աղտոտված կարգի: <p>Գետ Գավառագետ՝</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք՝</u> շատ մաքուրից բավական մաքուր կարգի, - <u>Նորայրուս գյուղից վերև՝</u> ավտոմայրուղու կամուրջի հարևանությամբ՝ ուժեղ աղտոտված կարգի,
--	--	--	--	--	--	---

						<p>- <u>գեղարքերան՝</u> թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի:</p> <p>Գետ Ծակքար</p> <p>- <u>ակունք՝</u> շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի,</p> <p>- <u>գեղարքերան՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ բավական մաքուր կարգի:</p> <p>Գետ Մասրիկ՝</p> <p>- <u>ակունք՝</u> միանգամայն մաքուր կարգի</p> <p>- <u>Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ խիստ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ թույլ աղտոտված կարգի</p> <p>- <u>Գեղարքերան՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ խիստ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ թույլ աղտոտված կարգի:</p> <p>Գետ Արգիճի՝</p> <p>- <u>ակունք՝</u> միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի</p> <p>- <u>Ներքին Գեղաշենից ներքև՝</u> թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի</p> <p>- <u>գեղարքերան՝</u> թույլ աղտոտված կարգի:</p> <p>Գետ Լիճք՝</p> <p>- <u>ակունք՝</u> չափազանց մաքուր կարգի</p> <p>- <u>Լիճք գյուղից ներքև՝</u> թույլ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>աղտոտված կարգի:</p> <p>Գետ Վարդենիկ`</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք</u>` շատ մաքուրից բավական մաքուր կարգի, - <u>Վարդենիկ համայնքի կենցաղային հոսքաջրերի թափման հատված</u>` խիստ աղտոտվածից չափազանց աղտոտված կարգի, - <u>գետաբերան</u>` բավական մաքուրից չափավոր աղտոտված կարգի: <p>Գետ Մարտունի`</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք</u>` շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի, - <u>արտահոսքերի թափման հատված</u>` խիստ աղտոտվածից չափազանց աղտոտված կարգի, - <u>գետաբերան</u>` խիստ աղտոտվածից չափազանց աղտոտված կարգի: <p>Ռեկրեացիոն գոտիներ`</p> <ul style="list-style-type: none"> - մաքուր կարգի: <p><u>Համաձայն Ամբրագենի</u> ըստ 37° C-ում 24 ժամվա ընթացքում աճող սապրոֆիտ մանրէների քանակի, հետազոտված գետի տարբեր հատվածների ջրերի որակը բնութագրվում է.</p> <p>Գետ Ձկնագետ`</p> <ul style="list-style-type: none"> - <u>ակունք</u>` դաս I (մաքուր)
--	--	--	--	--	--	--

						<p><u>-գեղաբերան՝</u> դաս II (թույլ աղտոտված):</p> <p>Գետ Դրախտիկ</p> <p>- <u>ակունք՝</u> դաս I (մաքուր)</p> <p>- <u>Դրախտիկ գյուղից մոտ 100մ ներքև՝</u> դաս II (թույլ աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան՝</u> դաս II (թույլ աղտոտված):</p> <p>Գետ Գավառագետ՝</p> <p>- <u>ակունք՝</u> դաս I (մաքուր),</p> <p>- <u>Նորապուս գյուղից վերև՝</u> ավտոմայրուղու կամուրջի հարևանությամբ՝ դաս II (թույլ աղտոտված),</p> <p>- <u>գեղաբերան՝</u> դաս II (թույլ աղտոտված):</p> <p>Գետ Ծակքար՝</p> <p>- <u>ակունք՝</u> դաս I (մաքուր),</p> <p>- <u>գեղաբերան՝</u> դաս I (մաքուր):</p> <p>Գետ Մասրիկ՝</p> <p>- <u>ակունք՝</u> դաս I (մաքուր)</p> <p>- <u>Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ՝</u> դաս II-III (չափավոր աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան՝</u> դաս II (թույլ աղտոտված):</p> <p>Գետ Արգիճի՝</p> <p>- <u>ակունք՝</u> դաս I (մաքուր)</p> <p>- <u>Ներքին Գեղաշենից ներքև՝</u> դաս II (թույլ աղտոտված)</p>
--	--	--	--	--	--	---

						<p>- <u>գետաբերան</u>՝ դաս II (թույլ աղտոտված): Գետ Լիճք` - <u>ակունք</u>՝ դաս I (մաքուր) - <u>Լիճք գյուղից ներքև</u>՝ դաս II (թույլ աղտոտված): Գետ Վարդենիկ՝ -<u>ակունք</u>՝ դաս I (մաքուր) -<u>Վարդենիկ համայնքի կենցաղային հոսքաջրերի թափման հատված</u>՝ դաս II-III (չափավոր աղտոտված) -գետաբերան՝ դաս II (թույլ աղտոտված): Գետ Մարտունի՝ -<u>ակունք</u>՝ դաս I (մաքուր) -<u>արտահոսքերի թափման հատված</u>՝ դաս II-III (չափավոր աղտոտված) - <u>գետաբերան</u>՝ դաս III (ուժեղ աղտոտված):</p> <p style="text-align: center;"><u>ՍԵՎԱՆԱ ԼԻՃ</u></p> <p>Ուսումնասիրվել է նաև Սևանա լճի տարբեր մասերի ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող (մեզոֆիլ) սապրոֆիտ մանրէների, խմորասնկերի, բորբոսասնկերի քանակը և կոլի-ինդեքսը: Ջրանմուշները վերցված են մայիս ամսին Սևանա լճի 4-րդ (փոքր Սևան) և 24-րդ (մեծ Սևան) դիտակետերից՝</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համապատասխանաբար 0, 30, 60 և 0, 10, 30 մ խորություններից, ինչպես նաև լիտորալ (7 մ խոր.) շրջանների մակերևույթից: Կատարված մանրէաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Մեծ Սևանի պելագիալի (24-րդ դիտակետ) ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը փոխվել է համապատասխանաբար 88-440 ԳԱՄ/մլ և 2-16 ԳԱՄ/մլ սահմաններում: Առավել բարձր արժեքներ արձանագրվել են 30 մ խորությունում: Նշենք, որ ըստ խմելու ջրի սանիտարական նորմատիվային պահանջի՝ սապրոֆիտ մեզոֆիլ մանրէների (37°C-ում 24 ժամվա ընթացքում աճող) քանակը չպետք է գերազանցի 50 ԳԱՄ/մլ: Դիտակետի ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկները (40մլ ջրանմուշում) չեն հայտանաբերվել: Խմորասնկերը հայտնաբերվել են միայն ջրի մակերևույթին՝ 5 ԳԱՄ/100մլ, իսկ բորբոսասունկ՝ 10 մ խորությունում՝ 1 ԳԱՄ/մլ:</p> <p>Մեծ Սևանի Կարմիր դիտակետում</p>
--	--	--	--	--	--	--

						<p>(լիտորալ) 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը կազմել է համապատասխանաբար 71 ԳԱՄ/մլ և 2 ԳԱՄ/մլ: Աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել: Խմորասնկերի և բորբոսասնկերի քանակը կազմել է համապատասխանաբար 10 ԳԱՄ/100մլ և 2 ԳԱՄ/մլ:</p> <p>Փոքր Սևանի պելագիալի ջրերում (4-րդ դիտակետ) 20°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը փոխվել է 215-1380 ԳԱՄ/մլ սահմաններում: Սապրոֆիտ մեզոֆիլ մանրէներ հայտնաբերվել են միայն ջրի մակերևույթին՝ 200 ԳԱՄ/մլ: Դիտակետի ջրերում լակտոզադրական աղիքային ցուպիկներ նույնպես չեն հայտնաբերվել, իսկ խմորասնկեր՝ միայն 30 մ խորությունում՝ 5 ԳԱՄ/100մլ:</p> <p>Հետազոտված ժամանակահատվածում Փոքր Սևանի լիտորալ շրջանների (Արևիկ, Շորժա) մակերևույթի ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը փոխվել է համապատասխանաբար 400-1700 ԳԱՄ/մլ և 64-200 ԳԱՄ/մլ: Առավել մեծ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>քանակներ արձանագրվել են Շորժա դիտակետում: Աղիքային ցուպիկներ հայտնաբերվել են միայն Արևիկ դիտակետում՝ 30 ԳԱՄ/լ: Հետազոտված շրջաններում խմորասնկերի քանակը կազմել է 10-ական ԳԱՄ/100մլ ջրում:</p> <p>Այսպիսով, ելնելով մանրէաբանական ցուցանիշներից (20°C աճող սապրոֆիտ մանրէների քանակ, կոլի-ինդեքս) ստացված արդյունքներից՝ հետազոտված ժամանակահատվածում Սևանա լճի տարբեր մասերի ջրերը՝ ըստ մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման դասվում են.</p> <p style="text-align: center;">Մեծ Սևան՝</p> <p>-ըստ 20°C աճող սապրոֆիտ մանրէների քանակի՝ շատ մաքուր կարգի, -ըստ կոլի-ինդեքսի՝ չափազանց մաքուր կարգի:</p> <p style="text-align: center;">Փոքր Սևան՝</p> <p>-ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ շատ մաքուրից բավական մաքուր կարգի -ըստ կոլի-ինդեքսի՝ չափազանց</p>
--	--	--	--	--	--	---

						<p>մաքուրից շատ մաքուր կարգի: <i>Բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ</i> «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման 2018 թվականի միջոցառումների» կատարման վերաբերյալ տարեկան ծրագրով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին հատկացվելիք գումարի չափը կազմել է 2526666.4 հազ. դրամ, որը պետության կողմից որպես դրամաշնորհ տրամադրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին: Յուրաքանչյուր եռամսյակ ՊՈԱԿ-ը բնապահպանության նախարարություն է ներկայացնում հաշվետվություն պետության կողմից որպես դրամաշնորհ ստացված գումարի վերաբերյալ, որը ծախսվում է համաձայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ծախսերի և եկամուտների նախահաշվի: 2018թ. ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին նախահաշվով հաստատված գումարից հատկացվել է 252666.4 հազ. դրամ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>(ներկայացվել է 2018թ. ՀՀ պետական բյուջեի ֆինասավորմամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ 16 թերթ):</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Պահպանություն, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի շրջանակում գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային պլաններով նախատեսված իրականացվել է գիտական հետազոտություններ: Մասնաճյուղերի կողմից իրականացվել են անտառգիտական և անտառտնտեսական միջոցառումներ, պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ, պահպանության ծառայությունների աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների</p>
--	--	--	--	--	--	---

							<p>միջոցով կատարվել է բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում և վերլուծություն:</p> <p>2018 թվականին ֆիզիկական անձի կողմից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված ջրածածկի ենթակա անտառների մաքրման պայմանագրով ջրածածկման ենթակա տարածքներից մաքրվել է 0.37 հա անտառածածկ տարածք: («Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ամփոփ հաշվետվությունը 32 թերթ գտնվում է բնապահպանության նախարարությունում)</p>
2.8	Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա	տարածքների վերականգնման աշխատանքների նախագծերի մշակում	«Քննապահ պանության նախարարություն	«Քննապահ տիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2018թ. և շարունակական	ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամազլխից, գումարը՝ ըստ գույքագրման արդյունքների	Գեղարքունիքի մարզպետարան Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա չի իրականացվել: Բնապահպանության նախարարություն 2018 թվականին շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին հատկացված միջոցներով

<p>կանխման և վերահսկողությամբ իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում</p>	<p>կազմակերպում</p>	<p>նախարարություն</p> <p>ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե</p> <p>ՀՀ բնապահ պանության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>արան</p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ (համաձայնությամբ)</p>			<p>ձեռնարկում ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման ուղղությամբ: 2018 թվականի ընթացքում տարածքի տնտեսվարողների հետ կնքվել է 90 աղբահեռացման պայմանագիր: Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում «Սևան» ազգային պարկի տարածքի բոլոր տնտեսվարողները ծանուցվել են կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման անհրաժեշտության մասին:</p> <p>Գեղարքունիքի մարզպետարան Գեղարքունիքի մարզում պլանավորվել և փակվել են 9 աղբավայրեր: Տարվա ընթացքում շահագործվել են 29 աղբավայրեր: Աղբահանությունն իրականացվում է մարզի 40 համայնքներում:</p> <p>Քաղաքաշինության կոմիտեն ներգրավված է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված հանրապետական մակարդակով աղբահանման և աղբի մշակման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբում:</p>
--	---------------------	---	--	--	--	---

2.10	Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգի հավատարմագրային կառավարման իրականացում	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործում և պահպանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե		2017-2019թթ.	2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2017-2019 թվականների համար յուրաքանչյուր տարի Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205,800,0 հազ. դրամ:	2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2017-2019 թվականների համար յուրաքանչյուր տարի Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205800,0 հազ. դրամ: «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրով 2018 թվականի ընթացքում հատկացվել է 205,800.0 հազ. դրամ:
------	---	--	--	--	--------------	--	--